

ծով առևտրական, քհ. կը ձեռնարկուի 1891 ին, Արմաշ. Չալկարայի Ս. Աստուածածին եկեղեցւոյն վրայ: 1914 ին կը տարագրուի իր գիւղացիներուն հետ ու կը յաջողի մնալ ընտանեօք էսկիշէնի, կը պաշտօնավարէ հոն և զինադադարէն վերջ կը մեկնի Չալկարա. քէմալական արշաւանքին հետեանքով դարձեալ կը տարագրուի ընտանեօք՝ գիւղացւոց հետ: 1922 ին, Էրէջկիշը կը մեռնի Պուրսա, կը փոխադրուի Էտիրնէ, ապա Ռուսձուզ, ուր կը մնայ մինչև 1923. նոյն թուականին ուխտաւորութեամբ կուգայ Ս. Յակոբ, կը ծառայէ իբրև Ժամարար Սուրբ Տեղերու մէջ և Յոպպէ, 1925 ին կ'ստանայ վեղար և կը շարունակէ ծառայել Սուրբ Տեղերու:

ԱՆԴՐԷԱՍ ԳԱՆՁԵՆՅԵԱՆՅ, ՇՈՒՇԵՅԻ.—Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ (1870). Ս. Յարութեան տաճարին համար նուէր կը ղրկէ 1871 ին, 60 հատ պղնձէ խոշոր և և ընտիր կանթեղներ: (Սիօն, 1871, էջ 72):

ԱՆԴՐԷԱՍ ԵՊՍ. ՎԵՂԱՊԵՏԵԱՆ, ՊՈՒՍԵՅԻ.— Աշկ. և դաւազանակիր Մատթէոս Ա. կթղի. (1858-1865). 1866 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ (Սիօն, 1866 էջ 102) և կը նշուի իրէ Անի քաղաքին հնութիւններէն մնացորդ չորս կտոր քանդակուած քարեր, ազուցուած քառակուսի ընկուզէ փայտի վրայ: (Սիօն, 1867, էջ 79):

ԱՆԴՐԷԱՍ ՊԵ. ՄԷՐՏԻՆՅԻ.—(1567-1589). Եղբորորդի Մէրտինցի Աստուածատուր պաքի. կը կոչուէր Պարոնէտ. Ս. Տեղեաց խնդիրներու կարգադրութեանց համար Պոլիս կ'ուղևորի և վարագարձին կը նորոգէ Ս. Համբարձման եկեղեցւոյն գմբէթը և յարակից մաւերը (1570): Սիօնի վերնատան եկեղեցւոյն զբաւման պատճառաւ փրանկիսկեան կրօնաւորք այս միջոցին կը հիւրընկալուին Հայոց Ս. Հրեշտակապետի վանքը, ուրկէ կը փոխադրուին Վրաց Ս. Յովհաննու վանքը՝ զոր գնած և կոչած էին Ս. Փրկիչ (ՄՁ. թ. 25): Անդրէաս պաք. Երուսաղէմի Մբ. և Լսպ. Սամուէլ արքեպս. ի հետ ներկայ կ'ըլլայ՝ 1583 ին՝ Միքայէլ Սեբաստացի կթղ. ին Սեբաստիա գումարած ժողովին, ուր, Աբգար գպրի որդւոյն Սուլթանշահի Հոովմէն առ Թաղէոս եպս. Լեհաստանցի (աթոռակից կթղ.) գրած նամակին համաձայն, Աբգարին և անոր որդւոյն արքայական ընտանիքէ սերած ըլլալուն վրկա-